*Ս. Գևորգ եկեղեցում եղել են մի շարք խաչեր ՌՃԽԱ (1692), ՌՀԳ (1624), ՌՀԵ (1626), ՌՃՁԷ (1738) թվականներով:*

## Ս. ԿԱՐԱՊԵՏ

*Ս. Կարապետը տեղացիներն առ. այսօր կոչում են «Հանգստարանի եկեղեցի»: Ցարգ. կանգուն և գործող այս փոքրիկ եկեղեցին հիմնադրված է 1875 թ., օծվել է 1881 թ. հունիսի 11-ին: Նպաստավորողը եղել է Ակուլինե Պողոսյան Ալաճալյանը, իսկ վերակացուն՝ նրա ազգական Հովհաննես Խաթրանյանը: Կառուցվել է ռուս հայկական ճարտարապետության ոճով՝ ճարտարապետ Սաղոնովի նախագծի համաձայն:*

*Արաքուսա հիշեցնում է Թոփտի գյուղի ս. Փրկիչ եկեղեցին: Հնագույն արձանագրություններից ոչ մեկն այժմ չի պահպանվել, ուստի պրակում ղեկեղում ենք Ե. Շահազիզի հետեւյալ վերծանությունները.*

*511. Բեմի ճակատին ամրացված մարմարե հուշասալին՝*

ԵԿԵՂԵՑԻՍ ՍՐԲՈՅՆ ՅՈՀԱՆՆՈՒ-ՄԿՐՏՉԻ ՀԻՄՆԵԱԼ Ի 1875 ԵՒ ՕԾԵԱԼ Ի 11 ՅՈՒՆԻՍԻ 1881 ԱՄԻ ԱՂՔԱՏԱՆՈՑԱՒ ԵՒ ՀՈԳԵՏԱՄԲ ՀԱՆԴԵՐՁ ԿԱՌՈՒՑԱՒ ԿՏԱԿԱՒԱՆԴՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԾԱԽՈՒՔ ԱԶՆՈՒՀԻ ԱԿԻՒԼԻՆԵԱՅ ՊՈՂՈՍԵԱՆ ԱԼԱՃԱԼԵԱՆՑ Ի ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻՍ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԱՅ:

Հրատ. Ե. Շահազիզ, 65

## Ս. Կարապետ եկեղեցու գերեզմանոց

*512. Ակուլինա Ալաճալյանցի մարմարակերտ շիրմաքարին՝*

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ԱԶՆԻՒ ՏԻԿՆՈՋ ԱԿՈՒԼԻՆԵԱՅ ՊՈՂՕՍԵԱՆ ԱԼԱՃԱԼԵԱՆ, ՈՐ Ի ՏՈՀՄԷ ԽԱԹՐԱՆԵԱՆ, ՎԱԽՃԱՆԵԼՈՅ 3 ՍԵՊ. 1871 ԱՄԻ, Ի ՀԱՍԱԿԻ 62 ԱՄԱՑ:

*513. Նույն շիրմաքարի մյուս կողմին՝*

ՇԻՆՈՒԱԾՔՍ ԵԿԵՂԵՑՒՈՅՍ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ-ԿԱՐԱՊԵՏԻ, ՀՈԳԵՏԱՆ ԵՒ ԱՂՔԱՏԱՆՈՑԻ ՆՈՐԻՆ ԿԱՆԳՆԵՑԱՒ ԸՍՏ ԿՏԱԿԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՏԻԿՆՈՋՆ ԱԿԻՒԼԵԱՅ ԱԼԱՃԱԼԵԱՆ՝ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՂԲՕՐՈՐԴՒՈՅ ՆՈՐԱ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԽԱԹՐԱՆԵԱՆ:

Հրատ. Ե. Շահազիզ, 66

*Այս գերեզմանոցում են թաղված Գասպար Մարկոսյանը, Պոլովը, Նիկողայոս Աճեմյանը և շատ անվանի հայեր:*

*514. Ն. Աճեմյանի՝ սպիտակ մարմարից կերտված մահարձանին՝*

ԲԱՐԵԳՈՐԾ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՃԵՄԵԱՆ, 1818-ԱՊՐԻԼԻ 17, 1888 ՅՈՒԼԻՍԻ 10:

Հրատ. Ե. Շահազիզ, 67

*1967թ. ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրական արշավախումբը այս գերեզմանոցում գրանցել է հետեւյալ կոթողների վիմական արձանագրությունները.*

*Իրար կից կառուցված երեք դամբարաններ, սև մարմարից, կարմրավուն գրանիտե պատվանդաններով: Արևմտյան կողերին հայերեն արձանագրություններն են, արևելյաններին՝ նույն բովանդակությամբ ռուսերեն:*

515 ա. ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ/ ԿԱՐԱՊԵՏ-ՕՂԼՈՒԵԱՆ/, ԾՆԵԱԼ Ի 1 ՄԱՅԻՍԻ 1830 ԱՄԻ/, ՎԱԽՃԱՆԵԱԼ/ Ի 12 ԱՊՐԻԼԻ 1875 ԱՄԻ/ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ:

516 բ. ՑԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ/ ԿԱՐԱՊԵՏ-ՕՂԼՈՒԵԱՆ/ ԾՆԵԱԼ/ Ի 24 ՅՈՒՆԻՍԻ 1864 ԱՄԻ/, ՎԱԽՃԱՆԵԱԼ/ Ի 30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1888 ԱՄԻ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ.

517 գ. ԳԱՍՊԱՐ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ/ ԿԱՐԱՊԵՏ-ՕՂԼՈՒԵԱՆ/ ՋԵՐՔԵՋԵԱՆ/ ԾՆԵԱԼ/ յ7 ՕԳՈՍՏՈՍԻ 1825 ԱՄԻ/ ՎԱԽՃԱՆԵԱԼ/ 11 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1906-Ի/ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ:

*Ա.* Կարապետի որմնանկարի տակ՝

518 ա. ՅԻՇ[Ա]Տ[Ա]Կ... ՆՈՒԻՐԵՑԱՒ ԱՐԴԵԱՄԲՔ Ն. Ն[Ա]Խ[Ի]Ջ[ԵՒԱՆ]Ի ԲՆԱԿԻՉՆԵՐԻՑ, 1901:

519 բ. ՅԻՇԱՏԱԿ Է ՊԱՏԿԵՐՍ ԱՅՍ ՎԱՍՆ ՀԱՆԴՈՒՑԵԱԼ/ ՍԱՐԳՍԻ ԵՒ ՄԱՐԻԱՄՈՒ/ ՍԱՐԻԵԱՆՑ ՅՈՐԴԻՈՑ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ԲԱՂԴԱՍԱՐԷ, 1902 ԹԻՒ, 22 ՍԵՊՏ/ԵՄԲԵՐԻ/:

Ծանոթ. *Հիշատակված անձինք մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի ծնողներն ու հարազատներն են:*

520 գ. Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՒԱԳ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՄԱՐԻԱՄ ԵՒ ԱՂԱՍԻ ՇՄԱՒՈՆԵԱՆՆԵՐԻՑ/ ԻՐԵԱՆՑ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՈՐԳՈՒ-ԳԷՈՐԳԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ/ 7 ՀՈԿՏԵՄԲԱՐԻ 1944 թ.:

*521. Արծաթյա մասնատուփի վրա՝*

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ԽԱՉ ՊԱՐՍԱՄԻՆ ԾՆՈՂԱՑՆ ՀՈԳՈՒՆ Ի ԴՈՒՌՆ... ՄԱՍՆ ՍԲ ԿԱՐԱՊԵՏԻՆ Է: ԹՎ. ՌՃԽԲ (1693):

Հրատ. Ե. Շահազիզ, 67

## ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՇՐՋԱՆ

### ՉԱԼԹՐ / ՉԱԼԴՐ, ՉԼԴՐ/ ԳՅՈՒՂ.

*Ռոստովի մարզի Մյասնիկյան շրջանի կենտրոնն է՝ հիմնադրված 1780 թ.: Այժմ անզի գյուղերում ուսուցանում են մայրենի լեզուն ու գրականությունը, շրջանային «Կոմունիզմի արշալույս» թերթի մեկ էջը լույս է անսնում հայերեն: Առանձնապես հայապահպանության գործում մեծ երախաիք ունի հիշյալ թերթի պատասխանատու խմբագիր, անխոնջ բանահավաք Շահեն Մեսրոպի Շահինյանը:*

*Չալթրում առ այսօր պահպանվել է պատմա-ճարտարապետական մեկ հուշարձան՝ ս. Համբարձում գործող եկեղեցին, որ ճարտարապետական ձևերով հարազատ չէ հայկականին: Պատերին չի պահպանվել և ոչ մի արձանագրություն: Եկեղեցու քահանան մեզ ցույց ավեց մարմարե երկու փոքրիկ սալաքարեր, որոնցից մեկն ուներ հետևյալ արձանագրությունը.*

522. ԱՍՏԱՆՕՐ ԱՄՓՈՓԻՆ ՄԱՐՄԻՆՔ/ ԵՐԻՑՈՒՀՒՈՅՆ ԱՆՆԱՅԻ ՅՈՎԱԿԻՄ/ԵԱՆ ՓՈՓՈՎԱՑ ԵՒ ՈՐԴՒՈՑ ՆՈՐԻՆ/ ԳԷՈՐԳԱՅ ԵՒ ԹՈՌԻՆՆ ԷԼՊԻՍԻ:

*523.* Եկեղեցու վեմքարին՝

ԸՆԿԱԼ, ՏԷՐ, ԸՍՀՈՔԻ ԻՄ ԽԱՂԱՂՈՒԹ[ԵԱՄ]Բ:

*524.* Արծաթե խաչի վրա՝

Ց[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է Խ[Ա]ՉՍ Ս. / Հ[Ա]ՄԲ[Ա]Ր[Ձ]Մ[Ա]Ն/ ԵԿԵՂ[Ե]ՑԻՈ[Յ]Ն ՉԼԹՐ/ Գ[Ի]Ւ[Ղ]Ի ԱԿՕԲ ՍԱՐԳԻՍ ԽԱՍԲԷԿԵԱՆԻ/ ՀՕԳ[Ւ]Ո[Յ]Ն ԴՍՏ[Ե]Ր. ԸՆԾԱՑ[Ա]Ւ 1886/ ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ/ 15-Ի. Վ[Ա]ԽՃ./[Ա]Ն[Յ]Վ[Ե]Ց[Ա]Ւ 1919/ ՄԱՅԻՍ 12-ին:_